

ԱՆՆԿՈՒՆ, ՀՐԱՇԱԼԻ ՍԱՐՈՅԱՆԸ

Ամեն անգամ, երբ Երկրի 4 000 000 000 զավակների հզոր մակընթացության մեջ այս հին արեգակի տակ մի հայորդու գլուխ է երևում, հայերիս մեր այս հին տանը հրճվանքի առաջին բռնկումն անգամ անտազնապ չի լինում: Երևացող-երևելի մեր զավակների համար անխառն հրճվանք հայերիս մեր այս հին տանը, ոչ, չի շողում. գտնելու ժպիտը և կորցնելու տազնապը մեր դեմքին հյուսվում են միաժամանակ, միասին. մեր մահերը, ծախողումները, կորուստները այնքան շատ են, որ տազնապում ենք, թե լեզվական ու պետական ինչ նոր գրահի մեջ էլ լինեն նրանք, եթե նրանց մեջ կա հայի մի փոքրիկ թրթիռ, ծախողումն անպայման կկապի վերելքի նրանց ուղին:

Բայց ինչո՞ւ տազնապենք և ինչո՞ւ ուրախանանք այլ մշակույթների մեջ երևակվող հայորդիների համար. մերը, ի վերջո, այս փոքրիկ հողակտորն է, այս մի բուռ ժողովուրդը և ցամաքող գաղութների հետ ակունք առ ակունք նվազող հայերենի այս գետակը. չէ՞ որ, ի վերջո, գաղութներում ազգային գոյության միակ ձևը ազգային լեզուն է, իսկ մնացյալը անճար սրտի մխիթարություն է միայն:

Այդ այդպես է և միայն այդպես է, բայց եթե հայոց ճակատագրի մասին խոսելու մշտական ցանկությունն իմ մեջ երբևէ ուռճանա, թատրոնն ինձ թվա արտահայտման լավագույն ձև և մեր պատմության ամենահայերը կիսաբոլորեն և բեմից խոսեն իրենց զայրույթները, հույսերը, դատապարտումները, հաշտվածությունը, ընդվզումները, ապա ի թիվս այդ ամենահայերի լինելու է նաև ամերիկացի գրող Վիլյամ Սարոյանը: Այո, մենք մեր սերերը

մեր շահերի վրա չենք կառուցում, մենք սիրում ենք, որովհետև սիրում ենք, և իրականության նեղվածքի մեջ մեր էությունն է ներծծվում այն չապացուցվողը, թե լեզվափոխությունը հայ որակի հարատևումն է այլ կեղևի տակ: Եվ այստեղից էլ՝ ուրախության ու տագնապի այդ միահյուսումը, երբ ժողովուրդների համաշխարհային մակընթացությունը որևէ հայորդու հասակ է բարձրացնում:

Սարոյանի երևալու հետ միայն մեր ուրախությունը անխառն եղավ: Քառասուն տարիներե ի վեր իր հեռվից նա իր հայրերի մեր հին տանը ուրախություն ու միայն ուրախություն է ստեղծում: Նա այն զավակն է, ում մասին հայրը ասում է ժպիտով ու հպարտությունից տնքալով. «Նա կապրի, ես նրա մասին հոգս չունեմ»:

Գեղջկական մեր փառասիրությունը հիմա մի քիչ նեղվում է այն բանից, որ մեր պայծառ զավակը այնքան էլ լավ չի «ապրում», այսինքն՝ ինքը իր հռչակից մեծ է և հռչակված ուրիշներից էլ մեծ է, իր հռչակը իրենից փոքր է, այսինքն՝ ժամանակը սարոյանական չէ: Բայց նա միշտ էլ ժամանակի համար չի աշխատել, այլ ջանացել է ժամանակը սարոյանականացնել: Նրան գրչակից ու կրտսեր ժամանակակից մի բանաստեղծ ամերիկացի ասում է ինքն իրեն.

... սիրտը ցնծում է անելիք գործից.
բոլոր մրցանակները արդեն շահել է,
պետք է աշխատի հիմա իր համար:

Սարոյանը հենց սկզբից է աշխատել «ինքն իր համար»: Մրցանակային ոսկին նա ժխտել է ժանրի ստանդարտի հետ և

պաշտոնական ու պաշտոնականին հակադրվող գաղափարա-
բանությունների ստանդարտների հետ: Օգտակար գործողության
մոտավորապես 100 գործակցով նրանց գաղափարախոսություն-
ների կողքին՝ օգտակար գործողության Սարոյանի գործակիցը
կլոր զրո է կամ գրեթե զրո, նրանց մեջի իդեալ-կերպարի կողքին՝
Սարոյանինը թափթփուկներ են - ոտքները Գիլգամեշի ժամանակ-
ներում խանձված ասորիներ, իբր թե սևեռում դերվիշներ,
եղեռնից ուշքի չեկած հայեր, ժամում հազար մղոն արագությամբ
սլացող Ամերիկայի մրցուղիներից դուրս նետվածներ... Ժանրային
նրանց ինժեներական ճշգրիտ կոնստրուկցիաների մոտ նրա
գործերը հումքի տպավորություն են անում: Նա առաջադրել է
Սարոյանի իր ստանդարտը և միտում է թերևս միայն Սարոյան
մրցանակի:

Նրա համար՝ իրենից առաջ գրականություն չի եղել, նա
գրականությունից չի գալիս: Նա գալիս է ինքը իրենից, «ծեր
պատերազմը ձեր քաղաքակրթության ծնած հրեշն է, ձեր
քաղաքակրթությունը ձեր պատերազմից ինքներդ պաշտպա-
նեցեք», ինքը ստեղծում է իր քաղաքակրթությունը, և ինքն ու իր
գրականությունը թերևս շատ են նման ասորահայկական
արևելքի քրիստոնյա առաջին համայնքների ժողովականներին
ու նրանց զրույցին. նրանք՝ այդ առաջին համայնականները,
փտախտով հիվանդ Յոռմում էին, բայց Յոռմը նրանց մեջ չէր,
նրանք ականջ էին դնում իրենց մեջ ուրիշ շշուկների, և նրանց
զրույցները դեռ չէին դարձել քարոզ, նրանց խոսկումները դեռ չէին
դարձել պատվիրան և պատվիրանները սրի ծայրով դեռ չէին
անցրվում մարդու կողերից ներս:

Սարոյանը իրեն չի պարտադրում աշխարհին՝ այս մեծ Յոռմին:

Չի էլ առաջարկում: Անտակ ախորժակների այս ժամանակներում բացարձակ խղճի նրա սկուտեղը պարտադրելու կամ առաջարկելու համար շատ է աննյութեղ: Անհնար է պարտադրել կամ առաջարկել այն, ինչի գոնե մոտավոր պահանջարկը չկա: Անուշ այս հողը նրա նռնենիների կարիքը չի զգում, և որք, պետական ու ազգային բոլոր տեսակի հովանավորություններից զուրկ Սարոյանը մի քիչ շփոթված մրմնջում է, թե դուք լավն եք, ինչ որ անում եք՝ անելու էիք, ինչ որ լինելու է՝ կլինի, բայց ահա այս էլ կա:

Ի՞նչը կա: Մարդկային գութը: Ո՞ւր է այդ գութը: Որտե՞ղ է այդ գութը դարձել պաշտոնական կրոն և ստեղծել իր հասարակարգը: Դրա պատասխանը Սարոյանը չունի, և ստեղծում է իրավիճակներ ու մարդիկ, որոնց միասնական անունը խոտ, մթնշաղի մեջ կթվելու կամ մորթվելու սպասող կով, խճուղուց մի քիչ հեռու հովտում կանգնած ծի կամ Ջոն է, որոնք այնքան են բարի, որ իրենց բարության չափը իրենք էլ չգիտեն, քանի որ չգիտեն իրականության մյուս չափումները: Նրանց բոլորի միասնական անունը Վիլյամ Սարոյան է, նրանք կարողանում են խաբել, թե բնակիչներն են Ամերիկայի Միացյալ Նահանգների կամ աշխարհի որևէ անկյան, բայց աշխարհի բոլոր անկյուններն էլ նրանց համար դժվար բնակատեղի կլինեին, նրանք բնակիչներն են Վիլյամ Սարոյան աշխարհի:

Թբիլիսցի ուսանողները ամերիկացի վիպասան Ջոն Չիլդերին հարցրել էին, թե նա գրողներից ո՞ւմ է սիրում: Ամերիկացին պատասխանել էր՝ Լև Տոլստոյին: Իսկ ինչո՞ւ ոչ Դոստոևսկուն, ասել էին թբիլիսցի ուսանողները: Ամերիկացին ասել էր. բացատրելը դժվար է, բայց ինձ թվում է, թե Դոստոևսկու

հերոսները հիմա-հիմա սպանելու են Տոլստոյի իմ սիրած հերոսներին: Չիվերի պատասխանի մեջ մեծ ճշմարտություն կա, բայց ուսանողները կարողանում են առարկել ամեն ինչի. ասել էին. «Եթե այդպես է, Տոլստոյի Դորոխովը հիմա կգնա ու կսպանի Դոստոևսկու իշխան Միշկինին»:

Ոչ թե Դորոխովն ու Դևերը, Սարոյան աշխարհի բնակիչներին կարող են ոչնչացնել համաաշխարհային գրականության անգամ ամենաքրիստոնյա կերպարները, բացառությամբ, իհարկե, Ավետարանի Սիմոն հնձվորի, որ երեկոյի մեջ հոգնած գալիս էր հանդից, ետ դարձրին, ուրիշի խաչը կռնակը տվեցին ու հրեցին դեպի Գողգոթա:

Մի մեծ գերմանացի գրել է. «Դյուրաթեք մեր գերմաներենը թարգմանությունների համար այնպիսի մի գերազանց լեզվանյութ է, որ այլալեզու ուզածո գրքի գերմաներեն տեքստը կարդալիս մենք կարողանում ենք մեզ, այնուամենայնիվ, զգալ լեզվամիջավայրում այն լեզվի, որից թարգմանությունն է արված»:

Փրկություն է հենվել Թոմաս Մանի այս պնդման վրա և մտածել, թե Սարոյանի անգլերենի մեջ տրոփում է Սարոյանի հայերենը՝ հավելելով մի ուրիշ մեծ հեղինակության, իրեն՝ Սարոյանի թևավոր դարձած պարզաբանումը. «Պատկերածս միջավայրը ամերիկյան է, լեզուս՝ անգլերենը, և ինձ գրել ստիպողը՝ հայի ոգին»: Հաճելի է զգալ, որ մեծերը բացառություններ են, իրենք են ստեղծում իրենց օրենքները և հայի ոգին Սարոյանով մտել է կեցության նոր ոլորտ:

«Հայրենիքի ծայն», 06.12.1978թ.